





# Հոբելյանը տոնվեց մեծ շուքով









Անցած Կիրակի Չալթրում մեծ շուքով նշվեց Դոնի երկրամասում հայկական բնակավայրերի հիմնադրման 235-ամյակը: Տոնակատարությանը մասնակցեցին բազմաթիվ մյասնիկյանցիներ Դոնի Ռոստովից և հարևան շրջաններից եկած հյուրեր:

Ներկա էին շրջանի գլխավոր Արշակ Փորքշեյանը, շրջանի վարչապետի առաջին տեղակալ Վլադիմիր Քիլաֆյանը, դեպուտատների շրջանային ժողովի նախագահ Ծերոն Քեչեջիյանը, վետերանների շրջանային խորհրդի նախագահ Թամարա Պուչենկովան, շրջանի պատվավոր քաղաքացիներ Բեդրոս Չիբիչյանը և Ռուսաստանի Դաշնության արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Գրիգոր Խուռդայանը, շրջանային տարբեր կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներ, հոգևոր դասի ներկայացուցիչներ:

Ժամանել էին Ռուսաստանի Դաշնության Հարավային և Հյուսիս-Կովկասյան օկրուգներում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոս Արարատ Գոմցյանը, Դոնի Ռոստովում Ռուսաստանի Արտաքին գործերի մինիստրության ներկայացուցիչ Բորիս Գոկժաևը, Ռոստովի մարզի Օրենսդրական ժողովի դեպուտատ, Նոր Նախիջևանի հայկական համայնքի նախագահ Հարություն Սուրմալյանը, Ռոստովի մարզի Օրենսդրական ժողովի դեպուտատ Վլքադիմիր Ռոժկովը, Նեկլինովկսկի շրջանի դեպուտատների ժողովի նախագահ Անատոլի Սոբոլևսկին, "Հոկտեմբերի 50-ամյակ" կոլտնտեսության նախագահ Սերգեյ Սուխոմլինովը, Ռոդիոնովո-Նեսվետայսկի շրջանի վարչապետի տեղակալ Միխայիլ Գորշկովը և այլ պաշտոնատար անձինք:

Կենտրոնական հրապարակում ժողովրդի սիրած մեղեդիները հնչում էին փողային գործիքների նվագախմբի կատարմամբ, թանգարանի դիմաց ելույթ էին ունենում "Դհոլկուռնա", "Ծիծեռնակ" և "ծաղկեփունջ" անսամբլները:

Կեսօրին Չալթրի կենտրոնական ստադիոնում տեղի ունեցավ ֆուտբոլի վետերանների ընկերական մրցախաղ Ռոստովի մարզի կառավարության "Հիմք" և Մյասնիկյանի շրջանի հավաքական թիմերի միջև:

Շրջկենտրոնը պարդարված էր տոնին վայել գեղագիտական ձևավորումներով ու համայնապատկերներով: Գրադարանից սկսած մինչև փոստի շենքը ընկած փողոցամասում ձևակերպված էր "Պատմությունը դարերի միջոցով" թեմայով ազգագրական հատուկ ցուցահանդես:

Ժամը 17-ին կենտրոնական հրապարակում տեղի ունեցավ "Միացյալ ընտանիքում" մասսայական թատերականացված միջոցառում, որի ավարտից հետո կայացավ հոբելյանական տոնակատարության հանդիսավոր մասի բացումը:

Ներկաներին ողջունեց և տոնի առթիվ շնորհավորեց շրջանի գլխավոր Արշակ Փորքշեյանը: Նա ցանկացավ ամենքին առողջություն, երկար կյանք և ամենայն հաջողություններ: Ապա ջերմ խոսքեր ասացին Արարատ Գոմցյանը, Բորիս Գոկժաևը, Վլադիմիր Ռոժկովը, Հարություն Սուրմալյանը, Անատոլի Սոբոլևսկին, Սերգեյ Սուխոմլինովը, Բեդրոս Չիբիչյանը, Տեր-Թադեոս Հայբարյանը:

Հարություն Սուրմալյանը Արշակ Փորքշեյանին և Վլադիմիր Քիլաֆյանին հանձնեց "Դոնի հայկական համայնքի պատվավոր անդամ" հուշամեդալներ՝ Դոնում հայկական մշակույթի պահպանման գործում մեծ ավանդի համար:

Մինչև ուշ երեկո գյուղում շարունակվեց ժողովրդական խրախճանքը: Մարդկանց համար ելույթներ ունեցան Կիմ Նապարեթովի անվան ջազի անսամբլը, երգի և պարի "Հուսո աստղ" թատրոնը:

Տոնը ավարտվեց երկնային լուսապայծառ հրավառությամբ:

Հ ՍԱՐԳՍՅԱՆ

*Լուսանկարները՝ Ա. ՄԻՐՈՒՔՅԱՆԻ*